

Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճեններ և տպածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

368.5
h-61

Պատմովագրությունը բոլոր ժերեն երի, միացեք,
Ապահովագրությունը միություն ե—միություն՝ ուժ

Քյուղատեսեսական սերյա

Գիտական նոր գործ ե. նո պակաս
կողմէու կարող է ունենալ Բայց այդ
պակասությունը վերացնելու համար պետք
է մասնաւու և աշխատեն ամենքը՝ սիրե-
լով այդ գործը:

ԻՆՉՈՒՄ ՊԵՏք Ե ՎԵՐԱԲԵՐԵԼ ՊԵՏԱԿԱՐԻՆ

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԿԱՆՈՆՆԵՐ

Խազի. Ե. գ. — Փ.

Խազի. Ե. գ. գարամյան

368.5
h-61

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՒՍԱԿԻ

1924 թ.

ՏԵՐԵՎԱԿԱՆ

26.04.2013

44.24

1 MAR 2010

368.5

6-61

Պրոլետարիական բարոր յերկրութեա, միացեա
Ապահովագրությունը միություն ե--միությունը՝ ույժ

Գյուղասենական սերիա

300

1936-6

№ 4

Պետական նոր գործ ե. նա պակաս
կողմեր կարող և ունենալ Բայց այդ
պակասները վիրացնելու համար պետք
է մտածեն և աշխատեն ամենքը՝ սիրե-
լով այդ գործը:

ԻՆՉՈՒՄ ՊԵՏք Ե ՎԵՐԱԲԵՐՎԵԼ

1003
1/1647

ՊԵՏԱՊԻՆ

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԿԱՆՈՆՆԵՐ



ՀՐԱՄԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՊԵՏԱԿԻ

ԵՐԵՎԱՆ

1924

**ԻՆՉՊԵՍ ՊԻՏԻ ՆԱՅԵՆ ԳՅՈՒՂԱՅԻՔ ԱՊԱՀՈ-
ՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՆ**

Ամենքն ել գիտեն, վոր պետական ապահովագրության գործը Խորհրդային Միության մեջ բոլորովին ուրիշ հիմքերով ե կազմակերպված, քան առաջ եր:

Մեղանում այդ գործը զուտ ժողովրդական ե և անխտիր ամենքի համար:

Պետք է ուրեմն ամրացնել և տարածել ապահովագրության զաղափարը: Նա պետք ե գյուղացու սրտին շատ մոտիկ գործը դառնա:

Ինչպես վոչ վոք չի ուզում, վոր գողը մանի և յեզը գողանա, այնպես ել թույլ չպետք ե տալ, վոր ավաղակ մարդիկ մտնեն ապահովագրության գործի մեջ և ժողովրդի սեփականությունը թալանեն:

Պատմենք մի դեպք. Ռուսաստանում, Վլագիմիր նահանգի մի գյուղում կուլակ-վաշխառույի մեկը հազիվ վուրքի վրա կանգնող մի ձի յե առնում 7000 լ. բռներով և կարողանում է ապահովագրել տալ 45,000 բուրլով: Մի քանի

որից ձին սատկում եւ և այն մարդուն հաջող-
վում եւ ստանալ ± 5,000 ըուբլի:

Սա ինչ եւ նշանակում այն, վոր խորեբա-
յի մեկը ոգտվել եւ, իսկ մյուս գյուղացի ապա-
հովագրվողների կողեկներից հավաքված փողը
զուր տեղը կորել եւ:

Մի ուրիշ գեպք Հայաստանի կրանքից:

Յանքսերի ցուցակագրությունը կատարելու
ժամանակ խիզճը կորցրած ցուցակագրողի մեկը
տեսնում եւ, վոր Վողջաբերդ, Քարփչյու և մի
քանի ուրիշ գյուղացիների ցանքսը քիչ եւ. ու-
րիմն ապահովագնարն ել քիչ գումար և կազմե-
լու: Իսկ ինքն ապահովագնարի տոկոսով եր աշ-
խատում: Նա ինչ և անում, իրա բաժին
տոկոսը շատ դուրս բերելու համար, նա գյու-
ղացիների ներկայության կազմած ցուցակները
մի կողմ ե դնում, իր տանը նստած իր քեփով
նոր ցուցակ ե կազմում և ներկայացնում գոր-
ծակալին: 5 փութ ցանքս ունեցողի վրա գրում
ե 80 փութ, իսկի չունեցողին 24 փութ և
բաշխում:

Վողջաբերդի գործկոմը, ուսուցիչը և ու-
րիշները բաց արին այս խայտառակ զեղծումը
և մեղագորը դատարանով իր պատիճն ստացավ.
Նրան վճռեցին յերկու տարի բանա:

Այս որինակները ցույց են տալիս, վոր
գյուղացիք թէ իրենց և թէ հարեվան գյուղե-
րում պետք ե հետեւն և բաց անեն այդ տե-
սակի զեղծումն ըս, իրենց գիտցածը չթազցնեն,
այլ իսկույն հայանեն գործակալին կամ շըջ-
գործկոմին:

Նրանք պետք ե հետեւն նաև գործակալին,
վոր սա անարդար աթյուններ չանի, սխալներ
չզործի և իր իրավունքները չարը գործ չդնի:

Ի՞նչ ՊԵՏԸ Ե ԱՆԵՆ ՇՐՋԳՈՐԾԿՈՄՆԵՐԸ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Մենակ առանձին գյուղացները չեն, վոր
պետք ե աջակցեն Պետապին և նրա վրա նային
իրեն սեփական գործի,

Շըջգործկոմները և գյուղխորհուրդները,
վորոնք այժմ մասնակից են ապահովագրության
աշխատավորներին, պետք ե տանեն այդ գործը՝
սրտանց ու բարեխիզճ:

Շըջգործկոմները և գյուղխորհուրդները
գյուղացուն ամենամոտիկ կանդնած ընտրովի
և որհրդային իշխանությունն են:

Նրանք պարտավոր են ժողովրդին հաղոր-
դել պետական ապահովագրության մասին հրա-
մարկվող որենքներն ու կանոնները: Պետք ե

ոգնեն գուղացու ունեցածը ցուցակադրելու և
գնահատելու աշխատանքներին։ Գործակալներին
ամեն տեսակ դյուրություն պիտի տան գյուղի
ցուցակները կազմելու, տամադրելով նըանց
անհրաժեշտ մատյանները, Պետք և անմիջապես
գործակալին հայտնեն կատարված դժբաղդու-
թյունների (կարկտի, չումալի, կըակի) մասին։

Ապահովափառներն իրենք պիտի գանձեն,
կամ աջակցեն, վոր բոլորը ժամանակին տան և
դժվարություններ չլինեն։

Մեր ժողովրդի մեծ մասը կամ անգրագետ
ե, կամ կիսազրագետ. իսկ ապահովագրու-
կան գործում շատ անգամ պետք է լինում բա-
ցարություններ և տեղեկություններ տալ։

Երջգործկոմների աշխատակիցները պետք է
ուշադրությամբ հետեւին անցած դարձածին և
ամենից առաջ իրենք լավ ըմբռնեն ու հասկա-
նան գործը, վոր հետո կարողանան գյուղացի-
ների հարցերին պատասխան տալ և հարկ յեղած
տեղն ել ոգնել։

ԱՊԱՀՈՎԱՎՃԱՐԸ ՊԵՏԸ Ե ԺԱՄԱՆԱԿԻՆ ՏԱԼ

Շատ պարզ ե, վոր յեթե ամենիր ապա-
հովափառը ժամանակին չտան, գործը թուլ
ինի, կարող և վնասվել։

Շատ անգամ քիչ կարողության տեր,
աղքատ գյուղացին կաշվից դուրս և գա-
լիս, ճարուքար և անում և իր ապահովագրա-
կան պարտքը կատարում, ապահովագրարը ժա-
մանակին մտցնում է։ Իսկ ուրիշները, ավելի
ունեվորները, կուլակները, միշտ ել ձրի վաս-
տակի սովորածները, մատի արանքով են նայում
իրենց պարտականությունների վրա և դեռ
վճարողներին ել ծաղրում են։

Այսպիսի դրություն Խորհրդային Պետու-
թյան մեջ թույլատրելի չե. աղքատ ու միջակ
գյուղացին, վոր մեր ժողովրդի շատ խոշոր մե-
ծամանությունն ե կազմում, չպետք է թույլ
տան հարուստ կուլակներին իրենց ծաղրել։
Այլ պետք է ամեն որ դրսում, փողոցում, տա-
նը, ժողովների մեջ խաղք ու խայտառակ անեն
իրենց պարտականությունը չկատարողներին,
ապահովագրարը ժամանակին չտվողներին։

Յերեվակայեք, վոր ժողովրդի մեծ մասը
իր վճարը չտա. ինչ՝ գրություն կը ինի. Կար-
կուտը աջ ու ձախ ցանքերը կը փչացնի, չուման
հարյուրներով տափար կը կոտորի, իսկ Պետապը
կոպեկ չի ունենա, վոր գնասվածներին կարո-
ղանա ոգնել։ Ել ինչ՝ ապահովագրություն կը-
լինի առանց զբամի։ Նշանակում ե ապահովա-

գրության հաջողությունը կախված ե այն բանից, թե ամեն մի գյուղացի ջոկ- ջոկ և բոլորը միասին ինչ շափով են կատարել իրենց պարտը, առաջի ապահովավճարները:

Գեղեցիկ ցանկություններով և խոսքերով ապահովագրություն լինել չի կարող:

Պետք ե ապահովավճարները ժամանակին տալ և լրիվ տալ:

Ապահովավճարը ժամանակին չտվողը ինքն իր թշնամին ե, Խորհրդային Պետության թշնամին ե և Պետապի գործը քանդողը:

Իմացեք, թե ո՞վ չի ավել իր պարտը և ստիպեցեք վոր վճարի:

Մի ծուլանար ձեզանից պահանջվող կոպեկն ուր տալուց, վոր յերես ունենաք փորձանքի ժամանակ ձեր վնասը պահանջելու:

ԻՆՉ ՊԵՏք Ե ԽՍԱՆԱՆ ՅԵՎ ՄԻԾՅ ՀԻԾԵՆ ԱՄԵՆՔԸ

Խորհրդային պետական ապահովագրությունը նման չի բուրժուական յերկերների ապահովագրության: Նա շահ չի փնտրում, այլ աշխատավոր ժողովրդի շահերն ե պաշտպանում:

Ապահովագրությունը ժողովրդի Միության մի ձեն ե. իսկ իսկական ուժը միության մեջ ե:

«Ապահովագրություն» խոսքը «հացի» նման պետք ե հասկանալի դարձնել նույնիսկ յերեխաների համար:

Պետապը այսպիսի գյուրություններ և ոգնություն ե տալիս աշխատավոր գյուղացուն, վորի նմանը յերազել չեն կարող ուրիշ յերկիրների գյուղացիները, քանի նրանք ել չեն հաստատել իրենց Խորհրդային Պետությունը:

Պետական ապահովագրությունը հայտարարում ե, վոր «յերկնային ու աստվածային» պատիժները հեքյաթներ են: Կան միայն բնության և ուրիշ գանազան սովորական զժբախտ պատահարներ, վորոնց վեմ մարդս կարող ե և պետք ե կուփի:

Պետապը նոր գործ ե, նա պակաս կողմեր կարող ե ունենալ բայց այդ պակասները վերացնելու համար պետք ե մտածեն և աշխատեն ամենքը, սիրելով այդ գործը:

Պետական ապահովագրությունը ժողովրդական հարուստության պահապան «Հրեշտակն» եւ Նա վոչ կարելացի ե վախենում, վոչ կրակից, վոչ ցավից և վոչ գողից:

Պետական պարտադիր ապահովագրությունը չի թողնում զյուղացուն քաղցած մեռնել. իսկ նրա հետ միացած կամավոր ապահովագրու-

թյունը միջոց կըտա կուշտ լինելու և իր տնտեսությունը շենցնելու:

Յանքսերը ապահովագրել տված գյուղացու արտերը ամեն տարի կըկանաչեն: Չապահովագրող գյուղացին մի որ կարող է առանց կանաչ արախ մնալ:

Հավաքական ապահովագրությունը ամենալավ, ձեռնտու և հեշտ ձեն ե: Ուժ տվեք հավաքական ապահովագրության:

Անասունների ապահովագրությունը պահպանում է գյուղացու գոմը դատարկ մնալուց և քանդվելուց:

Պարտադիր ապահովագրությամբ գյուղացին միշտ կորցրածի մի մասն է գտնում. կամավոր ապահովագրությամբ նա ամբողջ կորցրածն է գտնում:

Պետական ապահովագրության հաջողությունը կախված է նրա միջոցներից, վորքանշատ և շուտ հավաքվեն ապահովավճարները, այնքան ավելի մեծ կրինի աշխատավոր բանվոր գյուղացուն տրվելիք ողնությունը:

Կատարեցեք ապահովագրողի ձեր պարտականությունները, վոր վոչ մի բան չխանգարի ձեր վնասները շուտ և կանոնավոր ստանալուն:

Պետապի գործակալը ժողովրդի մոտիկ բա


ըեկամն է. կանչեցեք նրան երբ վոր պետք ունենաք և նա կըդա:

Գողը տուն է մտնում, յերբ տերերը քնած են, կամ գոներն ու պատուհանները բաց՝ տունը դատարկ են թողել: Գյուղացին պետք է միշտ իր աչքը ապահովագրության գործի վրա պահի, վոր խաբերանները ներս չմտնեն և նրա ունեցածը թալանել և վնասել չկարողանան:

Պահանջեցեք, վոր գործակախները Պետապի գործերի և հաշիվների մասին ձեզ շուտ-շուտ զեկուցումներ տան:

Ամենքս միասին, ընդհանուր ուժերով մենք կստեղծենք այնպիսի կատարյալ ապահովագրություն, վորին ամբողջ աշխատարնը կընախանձի:

Կարդացեք և միշտ հիշեցեք գյուղատնտեսական ապահովագրության գլխավոր կանոնները:



**ՊԵՏԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ
ԿԱՆՈՆՆԵՐ**

ԲՈՒԽՍԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹՆԵՐԻ
(ցանքսերի, այլիների) ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ԿԱՐԿՏԻՑ

ՀԱԴԻԱՅՈՒՐ ԴՐՈՒՅՈՒՆ

1. Բուսական մշակույթների ապահովագրության ժամանակը հաշվում և ապրիլի մեկից մինչև հոկտեմբերի 15-ը:

2. Հիշյալ ժամանակի ընթացքում Պետակը դադարում և պատասխանառու լինելուց—

ա. Կանեփի և կտավաթի նկատմամբ՝ նրանց բաղելուց 6 որ հետո:

բ. Ծխախոտի նկատմամբ՝ տերեփները հավաքելու որից:

գ. Պաղատու և խաղողի այգիների նկատմամբ՝ պառւղները և խաղողը հավաքելու որից:

դ. Խմելի և բամբակի նկատմամբ՝ նրանց կոկոնները հավաքելու որից:

յե. Կարտոֆիլի նկատմամբ՝ դաշտից հավաքելու և վերցնելու որից:

զ. Հացահատիկների և մյուս դաշտային ցանքսերի նկատմամբ (բրինձ, լոբի, սիսեռ և այլնի) հնձելուց 10 որ հետո:

ե. Ցեթե բույսը բոլորովին վոչնչացել և վոչ թե կարկախից, այլ միներից, անասունների արածելուց, չորությունից, ցըրտից և ուրիշ փորձանքներից—այդ դեպքում Պետակը պատասխանառատվությունը վերջանում է նրանց վոչնչանալու որից:

3. Ապահովագրողը իրավունք ունի պարտադիր ապահովագրությամբ ապահովագրված իր բույսերը ապահովագրել նայել լրացուցիչ կամագոր կերպով, սպասվող բերքի իսկական արժեքի գումարով:

4. Կամավոր ապահովագրելու դեպքում, ապահովագրողը պարտավոր է ամբողջ իր ունեցած նույն տեսակի բույսը ապահովագրել տալ: (Այսինքն՝ չի կարելի, որինակ, ցորենի մեկ արտը ապահովագրել, իսկ մյուսները թողնել):

5. Ցեթե կարկուտը բոլորովին փչացնելու լինի վորյեե ցանքսը և տերը նույն հողում նոր ցանքս անի, նա պարտավոր է այդ նոր ցանքսը (կամ նոր տունկը) ապահովագրել տալ ընդհանուր ձևով:

ՊԵՏԱՂԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

6. Կարկտի տված վնասը Պետապը տալիս եւ պարտադիր ապահովագրության համար վորոշված գումարների (կոպար) և կաժավորությացիչ ապահովագրության փաստաթղթերի մեջ նշանակված գումարների հաշվով:

Ծանոթ. Պետապը ցանքսի վնասի համար պատասխատու չեւ.—

ա. — Յեթե հաստատվի, վոր ապահովագրողը զիտմամբ կարկտի վնասը մեծացրել ե զանազան գործողություններով:
բ. — Յեթե ցանքը կամ բռնյաը վնասվել ե վոչ թե կարկտից, այլ մի ուրիշ փորձանքից:

գ. — Յեթե ապահովագրողը ճշտությամբ չե կատարել իր վրա դրված պարտականությունները:

7. Կամավոր ապահովագրությամբ Պետապը խաղողի այգիների և արմտիքների (կարտոֆիլ և այլ) նկատմամբ պատասխանատու յեւ կարկտի նրանց հասցրած վնասի քանակի համար միայն, և վոչ թե փորակի (տեսակի):

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

8. Ապահովագրողը պարտավոր ե անմիջա-

պես ներկայացնել այն բոլոր տեղեկությունները, ինչ վոր նրանից պահանջելու լինեն գործակալը, կամ Պետապի այլ ներկայացուցիչները:

9. Յանքը վիշտացած հողում նոր ցանքս կամ տունկ անելու դեպքում ապահովագրողը պարտավոր է գործակալին ներկայացնել այդ հողամասին վերաբերող բոլոր տեղեկությունները:

10. Հողը վարձով վերցնող ապահովագրողը պարտավոր է իսկույն գործակալին ներկայացնել վարձկալական պայմանագրի պատճենը, յերբ նրանից այդ պահանջեն:

11. Կարկուտը խփելիս ապահովագրողը պարտավոր է յերեք որվա մեջ այդ մասին հայտարարություն տալ Պետապի գործակալին, իսկ յեթե նա բացակա յեւ, տեղական իշխանությանը (գյուղպետուրդին, շրջգործկոմին և այլն):

12. Յեթե ապահովագրողը ուզում է պահանջել, վոր կարկտից իրեն հասած վնասը շուտ տան (շտապ հատուցում), նա կարկտի մասին հայտարարությունը պետք է տա մինչև յերկու որը:

13. Վնասի շտապ հատուցում պետք է պահանջել, յեթե կարկուտը ամբողջ ցանքսը փչացը եւ և կրկնացանքս կամ նոր տունկ անելու ժամանակը դեռ չի անցել և կամ յեթե կարկուտը խփել ե բերքը հավաքելուց անմիջապես առաջ:

14. Յեթե պարզվի, վոր ապահովագրողը դուք տեղն ե հայտարարություն տվել, — վոր կարկուտը նրան ցանքսին չի վնասել, այդ դեպքում նա պարտավոր ե Պետապին վճարել այն ծախսերը (ճանապարհածախս, որապահիկ և այլն), վոր արվել են ապահովագրողի հայտարարության պատճառով:

15. Մինչև վոր որենքով սահմանված կարգով կարկտի տված վնասը չպարզվի և արձանագրությունները չկազմվեն, ապահովագրողը իրավունք չունի կարկուտը խփած արտում կամ այդում անասուն արածացնել, հունձ անել, բերքը ուրիշ տեղ տեղափոխել, և այն: Այսինքն նա իրավունք չունի այնպիսի բան անել վոր կարող ե կարկտի վնասը մեծացնել:

16. Կարկտի վնասի չափը վորոշելու համար Պետապի ներկայացուցիչը ինչ տեղեկություն վոր պահանջելու լինի, ապահովագրողը պարտավոր ե անմիջապես ներկայացնել:

17. Կամավոր ապահովագրության ժամանակ ապահովագրողը պարտավոր ե առաջուց վճարել որենքով պահանջվող ծախսերը (դրոշմատուրք և այլն) և ապահովավճարը, յեթե ապահովագրությունը տալու մասին ապահովագրության փաստաթղթերի մեջ ժամանակ նշանակված չե:



ՎԱՐՍԵՐԻ ՀԱՏԱՅԻ ԱՆՎԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆՇՈՒՐԻ ԱՆՎԱՆ

18. Կարկտի տված վնասի չափը վորոշում են Պետապի Գործակալը և յերկու բանիմաց մարդիկ, վորոնցից մեկին հրավիրում ե գործակալը, իսկ մյուսին ապահովագրվողը:

19. Վնասի փողը (ապահովագին) վճարվում ե մինչեվ բերքը հավաքելը 15 որ մետրած կամ ամենասուշը բերքը հավաքելու ժամանակ:

20. Վնասը շտագ տալու համար նշանակված և 10 որ ժամանակ, հաշված այն որից, յերբ ապահովագրվողը այդ մասին իր գրավոր պահանջը Պետապի գործակալին կընանձնի:

21. Խաղողի և պաղատու մյուս այգիների ծաղկելու ժամանակ կարկուտը խփելու դեպքում, վնասի չափը պետք ե վորոշվի կարկտի մասին հայտարարությունը գործակալին տալուց մինև 7 որվա ընթացքում:

22. Յեթե ապահովագրողը համաձայն չի լինի վնասի փորոշված չափի հետ, նա պարտավոր ե այդ մասին հայտնել արձանագրությունը կազմելու ժամանակ և Պետապի ներկայացուցիչը պարտավոր ե այդ հայտարարությունը մտցնել արձանագրության մեջ:

ՀՅ. Ապահովագինը վճառավածին վճարելիս
նրանից վոչ մի զումար հետ չի պահպում
(վար չի արփում) պետական կամ մասնավոր ու-
րիշ պարտքերի դիմաց՝ բացառությամբ ԶՀ. Ի
կեսում հիշված զեպքերից։ Ապահովագինը
վճարելիս Պետապը նրանից վերցնում է ապա-
հովագմարը միայն, յեթե ապահովագրողը
պարտը մնացած լինի։

24. Յեթե կարկախի խփած ցանքսի կամ
այլու բերքը զրավ է զրված յեղել Պետական
բանկի, կամ մի ուրիշ վարկ (պարտք) տվող
հիմնարկության տված փողի (պարտքի) զիմաց,
այդ զեպքում կարկախի վճառի ապահովագինը
ստանում է վարկ (պարտք) տված հիմնարկու-
թյունը։

ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ԿԱՄԱՎՈՐ ԱՊԱ- ՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԲՆԴԱՅՆՈՒՐ ԴՐՈՒԹՅՈՒՆ

1. Անասունների կամավոր ապահովագրու-
թյունը տարածվում է ամենքի անասունների
վրա, բացառությումը անասունի տոհարով
պարապողների անասուններից։

ԾԱՆՈԹ. — Առայժմ կամավոր ապահովագրել կա-

րելի յե խոշոր յեղջռուրավոր անասունները
և ձիյերը, մինչեվ կանոնազրության նոր
փոփոխությունը։

2. Ապահովագրել կարելի յե այն անասուն
ները գորոնք առողջ են և աշխատելու հասակի
մեջ են։

ԾԱՆՈԹ. Մենչե նոր կարգադրություն հրատա-
րակելը առայժմ անասունների աշխատանքի
կարող (աշխատառնակ) հասակը ընդունված
է խոշոր յեղջռուրավոր անասունների հա-
մար $1 \frac{1}{2}$ — 12 տարեկան, ձիյերի համար
3—15 տարեկան,

3. Անասունները կամավոր ապահովագրողը
պարտավոր է ապահովագրել տալ իր ունեցած
(անտեսության) այն անասունները, վոր ցույց
են տված Զ. Ի. կետի մեջ։ Յեթե ապահովագրողը
չայստանի սահմաններում նույն անսուսներից
ուրիշ տեղ ել ունի, նա պարտավոր է և այդ
անասունները մի անգամից ապահովագրել
տալ։

4. Անասունը ապահովագրվում է մեկ տա-
րի ժամանակով, հաշվելով ապահովագրը
տալու որից և վերջանում է հաջորդ տարի
նույն ամսի նույն որվացեր. Ժամը 12. ին. Ապա-
հովագրությունը կարելի յէ ժամանակից առաջ
նորոգել, վոր Պետապի պատասխանատվությու-
նը չընդհատվի։

5. Ապահովագրության ժամանակի (մեկ տարվա) ընթացքում ապահովագրողը պարտավոր է ամենաուշը՝ որքա մեջ ապահովագրել տալ ձեռք բերած նոր անսառունը, ապահովագրության հասակին հասածները և հիվանդության պատճառով դեռ չապահովագրված և հետո առողջացած անսառունները:

6. Յեթե ամրող դժուղը մեկ անգամից միասին (հավաքական) ապահովագրել տան անսառունները, Պետապը նրանց առանձին իրավունքներ և դյուրություններ կը առ:

ՊԵՏԱՊԻ ՊԱՏՍՍԽԱԱՆԱԾՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

7. Պետապը մխասված անսառունի արժեքը վճարում է ապահովագրության փաստաթղթերում նշանակված գումարների համաձայն:

Ժանօր. Պետապի գործակալը իրավունք ունի առանց անսառութիւն քննության ապահովագրել խոշոր յեղջուրագոր անսառունները միշտ 35 ր. արժողությամբ և ձիյերը մինչեւ 50 ր. արժողությամբ, պայտանով զոր ինքը անձամբ տեսնի ապահովագրելիք անսառունը:

8. Պետապը մահացած անսառունի վնասը տպիս ե. —

ա) Յեթե նա սատկել է վորելիք հիվանդությունից:

բ) Յեթե գաղաններն են կերել, կրակի մեջ և մասցի և վառվել, կայծակն և խփել, կամ մի ուրիշ դժբախտության և պատահել:

գ) Յեթե անսառութական որենքների համաձայն անսառութիւն կարգադրությամբ և մորթված, անբուժելի հիվանդություն կամ այլ պաճառով:

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԴՅՈՒՆ ՊԱՐՏՍԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

9. Ապահովագրողը, կամ նրա լիազորը (վերիլը) պարտավոր է ։ որքա ընթացքում հայանել Պետապի Գործակալին, կամ, յեթե նա բացակա յե, տեղական իշխանությանը իր անսառունների մեջ պարտահած հետեվյալ փոփոխությունների ժամանակին:

ա) Յերբ վոր անսառունը ապահովագրելու համար պահանջվող տարիքի մեջե մանում:

բ) Յերբ նոր անսառուն է առնում, վորը ապահովագրված չե, կամ առաջուց արդեն ապահովագրված և յեղել:

գ) Յերբ ապահովագրված անսառունը

տալիս ե ուրիշին (հանձնում ե այլ անտեսության) ժամանակավոր կերպով:

դ) Յեթե ապահովագրված անտառնը ծախում ե կամ վորեվե ուրիշի պատճառով իր ձեռքից գնում ե (դուրս ե գալիս անտեսությունից):

10. Տնտեսության մեջ վորեվե անտառն (մելխույն ե՝ ապահովագրված ե յեղել թե վոչ) հիվանդանալուն պիս ապահովագրողը պարտավոր ե անմիջապես հայտնել անասնաբուժին (անասունների բժշկին—վետերինարին) և Պետապի զործակալին: Իսկ յեթե նա չկա, տեղական իշխանությանը:

11. Յեթե ապահովագրողի անտեսության մեջ վորեվե անտառն սատկելու լինի (ապահովագրած լինի թե վոչ) ապահովագրողը պարտավոր է 24 ժամվա մեջ հայտնել անասնաբուժին կամ բուժակին (ֆելլուկին), միևնույն ժամանակ Պետապի ներկայացուցչին կամ տեղական իշխանությանը:

12. Ապահովագրողը իրավունք չի ունենալ սատկած անտառնի վնասի փողը (ապահովագինն) սատանալ հետեւյալ գեղքերում:—

ա) Յեթե նա զործակալին կամ տեղական իշխանությանը ցույց չի տվել

անտառնի դիակը, կամ գոնենք նրանից մնացածը:

բ) Յեթե առաջին անգամ ապահովագրված անտառնը սատկելու լինի ապահովագրելուց հետո մինչեվ 20 որը:

գ) Յեթե անտառնի սատկելու մասին ժամանակին չի հայտնված ում վորետք ե, կամ յեթե այդ մասին հայտնված ել ե, անտառնի հիվանդանալու մասին հայտնված չի յեղել:

դ) Յեթե պարզվի, վոր ապահովագրողը իր բոլոր անտառները (խոշոր յեղաւագոր և ձի) չե ապահովագրել, թաղցրել ե:

յե) Յեթե ապահովագրողը պահանջվող հայտարարությունը (Զ-րդ հոգվածի գ. և դ. կետերի) չե տվել ժամանակին:

զ) Յեթե պարզվի վոր ապահովագրողը չի կատարել վարակիչ և համաձարակ (Ընդհանուր) հիվանդությունների գիտ կռվելու համար հայտարարված պարտագիր կանոնները և դա պատճառ ե յեղել անտառնի սատկելուն:

ե) Յեթե պարզվի, վոր ապահովագրողը դիակմամբ ե վշացըել սատկե-

ցրել իր՝ անսառւնը կամ վատ խնամք ե տվել նրան:

ը) Յեթե անսանատերը կամ՝ նրան փոխարինողը հակառակիել ե տնտեսության անսառւնների թիվը ստուգելուն և դրա պատճառով ել անսառւնների իսկական թիվը մնացել ե չպարզված:

թ) Յեթե անսառւնը սատկել ե Հայոսատանի սահմանից դուրս, 5 վերստից ավելի ճեռու այն գյուղից, վորտեղ ապահովագրված ե յեղել անսառւնը:

ՎՆԱՄՄՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՈՒՄ

13. Ապահովագրված անսառւնը սատկելիս զետապի ներկայացուցիչը մնացորդը կամ դիակը քնության յենթարկելուց հետո արձանագրություն ե կազմում յերկու վկանների ներկայացությամբ, վորոնցից մեկին հրավիրում ե ապահովագրողը, իսկ մյուսին Պետապի ներկայացուցիչը: Այս գործում անպայման մասնակցելու յենային տեղական իշխանության ներկայացուցիչը:

Ծանոթ. Ապահովագրողի ազգականները կամ նրա մոտ ծառայողները չեն կարող վկալինել:

14. Յեթե բժշկական քննությունը պարզի, վոր անսառւնը վարակիչ հիվանդությունից չե սատկել, նրա կաշին տրվում ե անսանատիրոջ:

Ծանոթ. Հիվանդությունները չտարածելու նովատակով խիստ արգելվում ե սատկած անսառւնի կաշին առանց անհամարուժի թույլտվության քերթել: Այս բանում հանցավորները կենթարկվեն խիստ պատժի և կըզրկվեն սատկածի վնասի ապահովագինն ստանալու բրափունքից:

15. Եթե բժշկական քննությունը պարզի, վոր ապահովագրված անսառւնը վտանգավոր վարակիչ հիվանդ չե, բայց գործածելու համար արգեն անպետը ե դառել, անսանատիրոջ համաձայնությամբ կարելի յե մորթել իբրև մսացու: Այս գեղը ապահովագրողը ստանում է ամրող ապահովագինը, միայն թե նըսնից դուրս կըդան մսի և մյուս մասերի արժեքը՝ 40 տոկոսը:

Յեթե ապահովագրողը չհամաձայնվի վոչ վարակիչ, բայց անբուժելի (չբժշկվող) հիվանդ անսառւնը իբրև մսացու մորթել, այդ բոպելից անսառւնը այլևս ապահովագրված չի համարվում

և նրա համար արված ապահովագնարը տիրոջը չի վերադարձվում:

16. Յեթե բժշկական քննությունը պարզի, որ ապահովագրված անսառունը վարակիչ հիվանդ է և նա պարտադիր կերպով պետք է փոչնչացվի (պետք է սատկեցնել), այդ դեպքում սատկեցրած (պար և սատկեցնել), այն հիմնարկուանսունի փողը վճարում է այն հիմնարկությունը, վորին հանձնված է յեղել անսառուների հիվանդությունների գեմ կովել: Ապահովագնից դուրս գալով այդ հիմնարկությունից վճարված փողը, մնացածը վճարում է Պետապը:

17. Վնասի ապահովագնից վոչ մի մասնագոր կամ պետական պարաք (տուրք և այլն) դուրս գալու իրավունք չկա, բացի 18 րդ կետում հիշված դեպքից:

18 Յեթե ապահովագրված ու սատկած անսառությունը գրավ է գրված յեղել Պետական բանկից կամ մի ուրիշ վարկային նիմնարկությունից սված վարկի (պարտի), փոխառության դիմաց, այդ դեպքում եթե վնասի ապահովագինը սահմում է վարկ (պարտի) սվող հիմնարկությունը յեվ վոչ թե անսառատերը:

ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՍԱՏԱԿԵԼՈՒՑ

ՀԵՂԱՆՈՒՄ ՄԱՍ

1. Անսառունների պետական պարտադիր ապահովագրությունը տարածվում է դյու դատնական անսառունների վրա:

Ծանոթ 1. Առաջին տարին պարին ապարտադիր ապահովագրության յենթարկվում են միայն խոշոր յեղջուրավոր անսառունները և ձիյերը $1\frac{1}{2}$ տարեկան հաստից սկսած:

Ծանոթ 2. Անսառունների պարտադիր ապահովագրության չեն յենթարկվում. — այն խորհրդային տնտեսությունների անսառունները, վորոնք անտեսական հաշվառման մեջ չեն մտնում:

բ) Կոռպերատիվ կազմակերպությունների այն անսառունները, վորոնք ապահովագրված են փոխադարձ կոռպերատիվ ապահովագրությամբ:

2. Պարտադիր կողարավոր ապահովագրությունը հաշվվում է նոկա. 1- ից մինչև հաջորդ տարվա սեպտ. 30- ը:

Այդ ժամանակամիջոցում ապահովագրողը

ապահովագին ստանալու իրավունքից զրկվում է հետևյալ դեպքերում.—

ա) Անասունը ծախելու կամ ուրիշ տնտեսության մեջ փոխադրելու որից:

բ) Զինվորական ձիահավաքի գեղաքում:

3. Պարտադիր ապահովագրված անասունները կարելի յեւ լրացուցիչ կամ ավոր կերպով եւ ապահովագրել յեթե նրանց իսկական արժեքը քարձը եւ պարտադիր ապահովագրությամբ նշանակված արժեքից (այսինքն կոպարից):

ՊԵՏՈՂԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՑՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4. Պետապը սատկած անասունի վնասը վճարում եւ պարտադիր ապահովագրության համար նշանակված գների (կոպարի) սահմաններում:

5. Պետապը վճարում եւ սատկած անասունների վնասի գինը ճիշտ նույն դեպքերում, ինչ գոր ցույց են տրված նայել կամագոր ապահովագրության համար (7-րդ կետ):

6. Պետապը պատասխանատու չե սատկած անասունի համար այն միենույն դեպքերում, ինչ գոր ցույց են տրված անասունների կամաց գոր ապահովագրության կանոնների 12-րդ կետում:

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Անասունների պարտադիր առահօվագրության ժամանակ ապահովագրողից պահանջվում են նույն պարտականությունները կատարել, ինչ գոր ասված եւ արդեն անասունների կամագոր ապահովագրության մասին:

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԴԱՐԸ

Ամեն մի ապահովագրող պարտագոր և վճարել անասունների այն ապահովագնաբանները, վոր վորոշել եւ Պետապը, Այդ ապահովագնաբանները հավաքում են սատկած անասունների վնասը վճարելու և այլ ծախսերի համար:

ՎՆԱՍՆԵՐԻ ՀԱՏՈՒՅՈՒՄԸ

Անասունների պարտադիր ապահովագրությամբ սատկած անասունների վնասները վճարելու կանոնները նույն են, ինչ գոր կամագոր ապահովագրության համար:


Պետապի գեմ յեղած բոլոր բողոքները և պահանջները յենթարկվում են գավառական Պետապի շրջանում գտնվող քաղաքցիական գտարանների քննության և վճին:



Ամենքու հետաքրքրվեցեք և իմացեք թե
 «ՀԱՅՊԵՏԱՊԼԻ ԻՆՉ Ե ՍՐԵԼ ՅԵՎ ԻՆՉ ՈՒՆԻ
 ԱՆԵԼՈՒ ԳՅՈՒՂՈՒՄ»

(Աղանովազլողի գրադարանի № 5 դրբույթ):

ՀՀ Ազգային գրադարան



NL0212847

ԳԻՆՆ Ե՝ 8 ԿՈՂ.

«ԱՊԱՀՈՎԱԴՐՈՂԻ ԳՐԱԴԱՐԱՆ»
ՀԱՅԴԵՏԱԴԻ ՀՐԱՄԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ի՞նչ է Պետական Ապահովագրությունը: 5 դ.
 2. Պետական Ապահովագրության տեսակները: 5 »
 3. Պետապլը ի՞նչ է վերցնում գյուղացուց և 5 »
ինչ է տալիս նրան:
 4. Ի՞նչպես պետք է վերաբերվել Պետապին:
Ապահովագրության գլխավոր կանոնները: 8 »
 5. Հայպետապլը ի՞նչ է արել և ի՞նչ ունի անելու
գյուղում: 6 »
-